

**Հ Ր Ա Մ Ա Ն N 340-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

**«13» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.**

**ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

**«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՆՈՏԱՐ ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հուլիսի 9-ի N ԵՆՊ-417/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Լ. Հովհաննիսյանի դիմումը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. 2018 թվականի հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Արաբկիր 1» նոտար Լիանա Հովհաննիսյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Դավթաշեն 2» նոտար Մերի Սարգսյանին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**